տուց հատուցանիցէ գաղեալ իրս և ինքն մտցի 'ի բանտ, մինչև հատուցանէ պարտս իւր։

ԳԼՈՒԽ ՄԺԴ.

Հատուցումն վասն պարտուց քրէական մեղաց ոչ այլ ոք հատուսցէ բայց միայն անձն մեղաւորին որում գործ ձեռաց նորա գործեցաւ մեղս քրէականս։

ԳԼՈՒԽ ՄԺԵ.

Ամենայն ոք պարտական ոսկոյ, երծաթոյ, ձիթոյ և գինոյ և ամենայն ինչ 'ի վերայ աշխարհի հատուցանել պարտ է պարտականն ստացուածքս իւր և ստացուածքս կնոջ իւրոյ, և անձն միմիայն պարտականին մտցի 'ի բանտ, կին և որդիք դստերք և ամենայն սերունդաւ և ազգականաւ անձամբք, և ստացուածօք ազատ լինեն, բայց ստացուածքէ կնոջ և պարտականին։

ԳԼՈՒԽ ՄԺԶ.

Ամենայն կին ամուսնացեալ որում այրն նորա բանտ արկեալ լցէ, կարող է ազատապէս մտանել 'ի բանտ կալ և ելանել և մնալ ընդ առն իւր եթէ ինքն կամեսցի։

ԳԼՈՒԽ ՄԺԷ.

Ամենայն երաշխաւոր եթէ ոչ յանձնեսցի 'ի